Վահան

Բնակչության թիվը՝ 1130

Վահանը / նախկին Կրասնոսելսկի շրջան, գ. Օրջոնիկիձե/ հիմնադրվել է 1925թ: Գտնվում է Հայաստանի հյուսիս արևելյան հատվածում: Բարձրլեռնային է, բարձրությունը ծովի մակարդակից 2000 մ. է: Հեռավորությունը մայրաքաղաքից 130 կմ է, մարզկենտրոնից՝105 կմ: Միջին հեռավորությունը ՀՀ պետական սահմանից 3.0 կմ է, 27 կմ երկարությամբ սահմանակից է Ադրբեջանի հետ: Բնակավայրում գործում է միջնակարգ դպրոց և մանկապարտեզ: Բնակչության հիմնական զբաղվածությունն անասնապահությունը և դաշտավարությունն է: